ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

Պ-436[1]-22.11.2022-ՏՀ-011/0

ՏԵՂԵԿԱՆՔ

ՆԱԽԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

~~**Հոդված 1.** «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» 2005 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-204-Ն օրենքի 4-րդ հոդվածի 15-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.~~

~~«**Հրագործական արտադրատեսակ՝ հրագործական բաղադրության այրման (**պայթյունի) օգնությամբ անհրաժեշտ արդյունքի ստացման համար նախատեսված արտադրատեսակ».~~

~~**Նույն հոդվածի 17-19 պարբերությունները խմբագրել հետևյալ բովանդակությամբ.**~~

~~**«կենցաղային նշանակության հրագործական արտադրատեսակ՝** ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված հրագործական արտադրատեսակ, որը նախատեսված է բնակչության կողմից կիրառման համար և որի շահագործումը կիրառման հրահանգին համապատասխան ապահովում է մարդկանց, ունեցվածքի և շրջակա միջավայրի անվտանգությունը.~~

~~**տեխնիկական նշանակության հրագործական արտադրատեսակ՝** ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված հրագործական արտադրատեսակ, որի վաճառքը արգելված է ֆիզիկական անձանց և որը կարող է կիրառվել բացառապես համապատասխան լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից՝ ՏԻՄ կամ ՀՀ կառավարության որոշումներով սահմանված կարգով։~~

Հոդված 1. «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» 2005 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-204-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի՝

ա) 15-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Հրագործական արտադրատեսակ՝ հրագործական բաղադրիչի այրման (պայթյունի) օգնությամբ անհրաժեշտ արդյունքի ստացման համար նախատեսված արտադրատեսակ».

բ) 17-րդ պարբերությունը ուժը կորցրած ճանաչել.

գ) 18-րդ և 19-րդ պարբերությունները շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«կենցաղային նշանակության հրագործական արտադրատեսակ՝ («Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի N 770 4 որոշմամբ հաստատված «Հրատեխնիկական արտադրատեսակների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 006/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգին համապատասխան I, II և III դասեր)՝ արտադրատեսակ, որը նախատեսված է բնակչության կողմից կիրառման համար, և որի

շահագործումը կիրառման հրահանգին համապատասխան ապահովում է մարդկանց, ունեցվածքի և շրջակա միջավայրի անվտանգությունը.

տեխնիկական նշանակության հրագործական արտադրատեսակ՝ («Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի N 770 որոշմամբ հաստատված «Հրատեխնիկական արտադրատեսակների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 006/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգին համապատասխան IV և V դասեր)՝ արտադրատեսակ, որի կիրառման համար պահանջվում են հատուկ գիտելիքներ և հարմարանքներ (սարքեր):»

~~21 րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.~~

2) 2-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

կենցաղային և տեխնիկական նշանակության հրագործական արտադրատեսակների չափորոշիչները, դասակարգումները, ինչպես նաև տեխնիկական անվտանգության ոլորտում տեխնիկական անվտանգության նորմերը, կանոնները և հրահանգները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

3) լրացնել նոր 3-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ

«Կենցաղային նշանակության հրագործական III դասի և տեխնիկական նշանակության հրագործական արտադրատեսակների ներմուծմամբ զբաղվելու գործունեությունը և կիրառումը թույլատրվում է միայն լիազոր մարմնի թույլտվությամբ, բացառապես պետական և համայնքային նշանակության կամ պետական և համայնքային մասնակցությամբ միջոցառումների համար:»

~~**Հոդված 2.** Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ~~

~~**1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից 6 ամիս հետո:**~~

~~**2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը կընդունվեն սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից 6 ամսյա ժամկետում:**~~

Հոդված 2.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից 6 ամիս հետո:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը կընդունվեն սույն օրենքի պաշտոնական հրապարակման պահից 6 ամսվա ընթացքում: